ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Պայմանագրի համարը, ամսաթիվ ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/24/3 «13» 08 2018թ.

4. Պայմանագրի կողմը «ՍԵԳ» ՍՊԸ
(անվանումը)

3. Պայմանագրի առարկան Սարքերի և սարքավորումների սպասարկման Ծառայություն

4.Պայմանագրի գումարը 2.807.500 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ

5. Պայմանագրի գործողության ժամկետը 1 տարի

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄՆԵՐ

N	Պաշտոնը	Անուն Ազգանուն	Ստորագրություն
16.	Վարչական տնօրեն	Ա. Շուշյան	
17.	Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ	Վ. Մարտիրոսյան	
18.	Իրավապայմանագրային բաժնի պետ	Կ. Մելքոնյան	
19.	Գլխավոր հաշվապահ	Գ. Մուրադյան	
20.	Մատակարարման բաժնի պետ	Ռ. Ալբերտյան	

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/24/3

ք. Երևան **«13» դեկտեմբեր 2018թ.**

«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրենի պաշտոնակատար Ա. Հովակիմյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՍԵԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս տնօրեն Վ. Սեփոյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, կնքեցին Պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված Ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը հաստատվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը հաստատող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված Ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված Ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա

մատուցված Ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 2.807.500 (երկու միլիոն ութ հարյուր յոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, որից ԱԱՀ-ն կազմում է 467.916,667 (չորս հարյուր վաթսունյոթ հազար ինը հարյուր տասնվեց ՀՀ դրամ վեց հարյուր վաթսունյոթ լումա) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության և հաշիվ-ապրանքագրի հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն

չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.5 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության

դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

7.8 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.9 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԱՏԱՐՈՂ	**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
«ՍԵԳ» ՍՊԸ	**«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ**
ք. Երևան, Սարկավագի 72/2, բն. 18	**Հասցե՝ ք. Երևան Անդրանիկի 1**
«Արարատբանկ» ԲԲԸ	**«Հայբիզնեսբանկ» Մալաթիա մ/ճ**
Հ/Հ 15100037072220100	**Հ/Հ 11500011726303 00**
ՀՎՀՀ 00878823	**ՀՎՀՀ 01522459**
Վ. Սեփոյան	**Ա. Հովակիմյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված N 1
«13» 08 2018թ. կնքված
ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/24/3 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ձեռքբերվող ծառայության նկարագիր			
Հ/Հ	Անվանում	Տեխնիկական բնութագիր	Ընդհանուր գինը՝ ՀՀ դրամ
1.	Համակարգիչների վերանորոգում և սպասարկում Fujitsu Esprimo P3721 E-Star 5 (i3-550, ATI Radeon HD5450 1024MB), Fujitsu Esprimo P520 (i3-4170, HD Graphics 4400), Fujitsu ESP P720 85 (i5-4590, GeForce GT 630), HP Pro 3500 G2(i3-3240,HD Graphics 4400)		
1.1.	Դիագնոստիկա	Դիագնոստիկա (ընդհանուր տեխնիկական թերությունների հայտնաբերում)	1000
1.2.	Պրոֆիլակտիկա	Պրոֆիլակտիկա (մաքրում փոշուց, յուղում, ջերմամեկուսիչ մածուկի փոխարինում)	1000
1.3.	Հովացման համակարգի մաքրում	Հովացման համակարգի մաքրում (մաքրում փոշուց, յուղում, ջերմամեկուսիչ մածուկի փոխարինում)	1000
1.4.	Հովացման համակարգի փոխարինում	Հովացման համակարգի փոխարինում, ներառյալ հովացուցիչ(ներ)ը	3000
1.5.	Մայրական սալիկի վերանորոգում	Մայրական սալիկի վերանորոգում	7000
1.6.	Մայրական սալիկի փոխարինում	Մայրական սալիկի փոխարինում	26000
1.7.	Տեսաքարտի վերանորոգում	Տեսաքարտի վերանորոգում	1000
1.8.	Տեսաքարտի փոխարինում ATI Radeon HD5450 512MB կամ համարժեք	Տեսաքարտի փոխարինում ATI Radeon HD5450 1024MB	14000
1.9.	Տեսաքարտի փոխարինում HD Graphics 4400 կամ համարժեք	Տեսաքարտի փոխարինում HD Graphics 4400 կամ համարժեք	1000
1.10.	Տեսաքարտի փոխարինում GeForce GT 630 կամ համարժեք	Տեսաքարտի փոխարինում GeForce GT 630 կամ համարժեք	32000
1.11.	Օպտիկական սկավառակի վերանորոգում	Օպտիկական սկավառակի վերանորոգում	500
1.12.	Օպտիկական սկավառակի փոխարինում	Օպտիկական սկավառակի փոխարինում	7000
1.13.	Կոշտ սկավառակի վերանորոգում	Կոշտ սկավառակի վերանորոգում	1000
1.14.	Կոշտ սկավաառակի փոխարինում 500GB 7.2k	Կոշտ սկավաառակի փոխարինում 500 GB 7.2k	28000

1.15.	Սնուցման սարքի վերանորոգում	Սնուցման սարքի վերանորոգում	2500
1.16.	Սնուցման սարքի փոխարինում Fujitsu DPS-300AB-44A 300W	Սնուցման սարքի փոխարինում Fujitsu DPS-300AB-44A 300W	14000
1.17.	Սնուցման սարքի փոխարինում HP 801550-001 180W	Սնուցման սարքի փոխարինում HP 801550-001 180W	14000
1.18.	Օպերատիվ հիշողության փոխարինում 2 GB DDR2 1333MHz	Օպերատիվ հիշողության փոխարինում 2 GB DDR2 1333MHz	7000
1.19.	Օպերատիվ հիշողության փոխարինում 2 GB DDR3 1333MHz	Օպերատիվ հիշողության փոխարինում 2 GB DDR3 1333MHz	8000
1.20.	Օպերատիվ հիշողության փոխարինում 4 GB DDR3 1600MHz	Օպերատիվ հիշողության փոխարինում 4 GB DDR3 1600MHz	12000
1.21.	USB 2.0 և 3.0 պորտերի փոխարինում	USB 2.0 և 3.0 պորտերի փոխարինում	1000
1.22.	Օպերատիվ հիշողության փոխարինում 4 GB DDR4 2400MHz	Օպերատիվ հիշողության փոխարինում 4 GB DDR4 2400MHz	16000
2.	**Դյուրակիր համակարգիչների վերանորոգում և սպասարկում Fujitsu LIFEBOOK NH751 HD+(CPU Intel Core i3-2310M 2.1GHz 3MB, HDD SATA III 500GB 5.4k, RAM 4Gb DDR3 1333MHz, Video Card 1Gb, մոնիտոր 17,3", DVD+/-R/RW Double Layer, WebCam 1,3 MP, Wi-Fi, Bluetooth, Lan 10/100/1000, USB modem, 4 x usb 2.0 (including 1 x eSATA & USB combo; 1 x Anytime USB Charge fuctionality)) և Fujistu Lifebook A555/G (15,6", Intel Core i5-5200U Processor (3M Cache, up to 2.70 GHz), RAM 4GB DDR3 1666MHz, 500GB HDD, Intel HD 5500 Graphics)**		
2.1.	Դիագնոստիկա	Դիագնոստիկա (ընդհանուր տեխնիկական թերությունների հայտնաբերում)	1000
2.2.	Պրոֆիլակտիկա	Պրոֆիլակտիկա	4000
2.3.	Մայրական սալիկի վերանորոգում	Մայրական սալիկի վերանորոգում	8000
2.4.	Մայրական սալիկի փոխարինում	Մայրական սալիկի փոխարինում	45000
2.5.	Տեսաքարտի վերանորոգում	Տեսաքարտի վերանորոգում	1000
2.6.	Օպտիկական սկավառակի փոխարինում	Օպտիկական սկավառակի փոխարինում	13000
2.7.	Էկրանի վերանորոգում	Էկրանի վերանորոգում	1000
2.8.	Էկրանի փոխարինում ներառյալ էկրանը	Էկրանի փոխարինում	24000
2.9.	Էկրանի լամպերի փոխարինում ներառյալ լամպը	Էկրանի լամպերի փոխարինում	10000
2.10.	Ստեղնաշարի փոխարինում	Ստեղնաշարի փոխարինում օրիգինալով	18000
2.11.	Հովացման համակարգի մաքրում	Հովացման համակարգի մաքրում	4000
2.12.	Սնուցման բլոկի վերանորոգում	Սնուցման բլոկի վերանորոգում	3400

2.13.	Սնուցման բլոկի փոխարինում	Սնուցման բլոկի փոխարինում	12000
2.14.	Կոշտ սկավառակի փոխարինում ներառյալ 500 GB 5.4k կոշտ սկավառակը	Կոշտ սկավառակի փոխարինում ներառյալ 500 GB 5.4k կոշտ սկավառակը	34000
2.15.	SSD սկավառակի փոխարինում	SSD Kingston 240GB 2.5" SATA III, 6Gb/s	45000
2.16.	Օպերատիվ հիշողության փոխարինում	Օպերատիվ հիշողության փոխարինում	10000
2.17.	Չիպսետի փոխարինում	Չիպսետի փոխարինում	15000
3.	**Տեղադրված տեսահսկման համակարգերի սպասարկում:**		
3.1.	ԴՎՌ(dvr) փոխարինում	Novus 3116AHD (16 պորտ)	145000
3.2.	ԴՎՌ(dvr) վերանորոգում	ԴՎՌ(dvr)_ների ընդհանուր վերանորոգում (Novus 3116AHD (16 պորտ) և h.264 network dvr (8 պորտ))	17000
3.3.	ԴՎՌ(dvr) պորտերի փոխարինում	ԴՎՌ(dvr) պորտերի փոխարինում (Novus 3116AHD (16 պորտ) և h.264 network dvr (8 պորտ))	1000
3.4.	Տեսախցիկների վերանորոգում	ներսի և դրսի տարբեր մոդելի տեսախցիկների վերանորոգում (Multistar DI 1005, Ir Color ccd camera sn-883, Ir Color camera ms-907,NVAHD-1DN3101)	5000
3.5.	Տեսախցիկների փոխարինում	DS-2CE15C2P(N)-IR կամ համարժեք	24000
3.6.	Տեսախցիկների կարգաբերում	ներսի և դրսի տարբեր մոդելի տեսախցիկների կարգաբերում (Multistar DI 1005, Ir Color ccd camera sn-883, Ir Color camera ms-907, NVAHD-1DN3101)	3500
3.7.	Կոշտ սկավառակի փոխարինում	կոշտ սկավառակի փոխարինում 2Tb, Sata	33000
3.8.	Վնասված լարերի փոխարինում	վնասված լարերի փոխարինում 1 մետր (պետք է ապահովի 180մ և ավել հեռավորության վրա տեսագրության ցուցադրումը մոնիտորին)	170
3.9.	Վնասված լարերի փոխարինում, տրոսով	վնասված լարերի փոխարինում, 1 մետր, տրոսով (պետք է ապահովի 180մ և ավել հեռավորության վրա տեսագրության ցուցադրումը մոնիտորին)	450
3.10.	Սնուցման սարքի վերանորոգուն	սնուցման բլոկի վերանորոգում	2500
3.11.	Սնուցման սարքի փոխարինում	սնուցման բլոկի փոխարինում	7500
3.12.	BNC խրոցի (штекер) փոխարինում	BNC խրոցի (штекер) փոխարինում	600
4.	**Սերվերների սպասարկում**		
4.1.	Պրոֆիլակտիկա	Պրոֆիլակտիկ մաքրում փոշուց,հովացման համակարգի յուղում, ջերմամեկուսիչ մածուկի փոխարինում: Մանր տեխնիկական թերությունների վերացում:Ծառայությունների մատուցումը իրականացվում է 1-2 օրացույցային օրվա ընթացքում (ծառայության մատուցման հայտի ներկայացումից հետո գրավոր):Ծառայության մատուցումը տեղում Ծառայության մատուցումը ոչ աշխատանքային օրերին	

4.1.1.	Fujitsu Primergy TX100S2/2XLFF	ք. Երևան Զ.Անդրանիկի 1	10000
4.2.	Դիագնոստիկա	Դիագնոստիկա (անսարքությունների և թերությունների հայտնաբերում): Անսարքությունների և թերությունների գրավոր ներկայացում պատվիրատուին:Ծառայությունների մատուցումը իրականացվում է 1-2 օրացույցային օրվա ընթացքում (ծառայության մատուցման հայտի ներկայացումից հետո գրավոր): Ծառայության մատուցումը տեղում: Կատարողը պետք է ունենա համապատասխան անձնակազմ և սարքավորումներ աշխատանքների կատարման համար: Ծառայության մատուցումը ոչ աշխատանքային օրերին	
4.2.1.	Fujitsu Primergy TX100S2/2XLFF, 500Gb, 5400 rpm	ք. Երևան Զ.Անդրանիկի 1	8000
Ծառայության մատուցման վայրը		ք. Երևան Զ. Անդրանիկի 1 («Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ, «Հարավային» մ/ճ), ք. Երևան Բագրատունյաց 6 («ԷՕԿՏ» մ/ճ), ք. Սևան Էներգետիների 4 («Արևելյան» մ/ճ), ք. Գյումրի Ղարսի խճուղի 25 («Արևմտյան» մ/ճ), ք. Գորիս Արևմտյան խճուղի 1 («Գորիս» մ/ճ), ք. Կապան Գործարանային 15 («Զանգեզուր» մ/ճ), ք. Վանաձոր Թևոսյան 2 («Հյուսիսային» մ/ճ) Չափաբաժիններ՝ 11 և 12 - ք. Երևան, Զոր. Անդրանիկի 1, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ	
Ծառայության մատուցման ժամկետը		Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 1 տարի	

Այլ պայմաններ

Այցը Պատվիրատուին կատարվում է Ծառայության մատուցման գրավոր հայտի ներկայացման նույն օրը: Մարզերում գտնվող մասնաճյուղերում սպասարկումը կատավում է 3 (երեք) օրացուցային օրվա ընթացքում: Պարտադիր այց է կատարվում մարզերում գտնվող մասնաճյուղեր 3 (երեք) ամիս մեկ: Մարզերում Պատվիրատուի կողից ներկայացուցչի ներկայությունը պարտադիր պայման է: Բոլոր ծառայությունները պետք է մատուցվեն ժամանակին և որակյալ: Բոլոր պահեստամասերը պետք է լինեն նոր, չօգտագործված և որակյալ: Անհրաժեշտությունից ելնելով ծառայությունների մատուցումը կատարվում է Կատարողի համապատասխան արհեստանոցներում, որի դեպքում սարքավորումների տեղափոխումը կատարվում են Կատարողի ուժերով և միջոցներով: Ծառայության ընթացքում օգտագործվող պահեստամասերի արժեքները մտնում են Պայմանագրի ընդհանուր գնի մեջ:

Կատարողը պետք է ունենա համապատասխան սերտիֆիկացված մասնագետներ սարքավորումների վերանորոգման, սպասարկման և այլ ծառայությունների մատուցման համար: Նախատեսել այցելություն նույն օրը (ք. Երևանում) տարբեր հասցեներ և ընկերության մասնաճյուղեր:

9 և 10 չափաբաժինների համար երաշխիք է սահմանված նվազագույնը 180 օր:

ԿԱՏԱՐՈՂ
«ՍԵԳ» ՍՊԸ
ք. Երևան, Սարկավագի 72/2, բն. 18
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510037072220100
ՀՎՀՀ 00878823

Վ. Սեփոյան
(ստորագրություն)

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459

Ա. Հովակիմյան
(ստորագրություն)

Հավելված N 2
«13» 08 2018թ. կնքված
ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/24/3 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հանձնման-ընդունման արձանագրության և հաշիվ-ապրանքագրի երկկողմ հաստատման օրվանից հաշված մինչև 15 աշխատանքային օրվա ընթացքում:

ԿԱՏԱՐՈՂ
«ՍԵԳ» ՍՊԸ
ք. Երևան, Սարկավագի 72/2, բն. 18
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510037072220100
ՀՎՀՀ 00878823

Վ. Սեփոյան
(ստորագրություն)

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459

Ա. Հովակիմյան
(ստորագրություն)

Հավելված N 3
«13» 08 2018թ. կնքված
ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/24/3 ծածկագրով պայմանագրի

ԿԱՏԱՐՈՂ
«ՍԵԳ» ՍՊԸ
ք. Երևան, Սարկավագի 72/2, բն. 18
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510037072220100
ՀՎՀՀ 00878823

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Կատարողը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ Ծառայությունները՝

N	Մատուցված Ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Հավելված N 3.1
« » 2018թ. կնքված
ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/24/3 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը հաստատելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված Ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն